Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

24.02.2017թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 17.02.2017թ.-ի թիվ 32 կարգադրությունը, <<Գետափի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում անցկացվեց 2015-2016թթ.-ի բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ Վ.Կարապետյանի, գլխավոր մասնագետներ՝ Ն.Կարապետյանի, Հ.Ավետիսյանի և Խ.Խաչատրյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին դպրոցի տնօրենի ժ/պ՝ Կ.Հակոբյանը և հաշվապահ՝ Ս. Վարդանյանը:

Աուդիտի հիմանական ուղղությունները

ա/ Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

դ/ Ակտիվների գույքագրման, առկայության համապատասխանության ստուգում:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքները կատարեցին՝ Վ.Կարապետյանը, Ն.Կարապետյանը, Հ.Ավետիսյանը և Խ.Խաչատրյանը: ՈՒնեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Վ.Կարապետյանը, Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը ունեն ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի չորս տարվա աշխատանքային փորձ: Խ.Խաչատրյանը ունի մեկ տարվա ներքին աուդիտորի աշխատանքային փորձ:

<<Գետափի միջնակարգ դպրոց>> Պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ գ. Գետափ:

Գործունեության նպատակը՝ աշակերտների հանրակրթական ուսուցում:

2015 թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ ըստ տարիֆիկացիայի՝

-դասարանների թիվը- 12:

-աշակերտների թիվը- 197:

-աշակերտների միջին խտությունը- 16.4:

Տարրական դպրոց 4 դասարան, աշակերտների թիվը 76, միջին խտությունը 19:

Միջին դպրոց 5 դասարան, աշակերտների թիվը 78, միջին խտությունը 15.6:

Ավագ դպրոց 3 դասարան, աշակերտների թիվը 43, միջին խտությունը 14.3:

Աշխատողների թվաքանակը 41, մանկավարժական աշխատողների թվաքանակը 28, մանկավարժական աշխատողների դրույքների թիվը 16, վարչական և սպասարկող անձնակազմի թվաքանակը 13, վարչական և սպասարկող անձնակազմի դրույքների թիվը 14:

Ընդամենը դրույքների թիվը՝ 30:

ՈՒսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը՝ 12.6 ժամ կամ 0.57 դրույք:

2016 թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ ըստ տարիֆիկացիայի՝

-դասարանների թիվը- 12:

-աշակերտների թիվը- 200:

-աշակերտների միջին խտությունը- 16.7:

Տարրական դպրոց 4 դասարան, աշակերտների թիվը 75, միջին խտությունը 19:

Միջին դպրոց 5 դասարան, աշակերտների թիվը 84, միջին խտությունը 16.8:

Ավագ դպրոց 3 դասարան, աշակերտների թիվը 41, միջին խտությունը 13.7:

Աշխատողների թվաքանակը 42, մանկավարժական աշխատողների թվաքանակը 29, մանկավարժական աշխատողների դրույքների թիվը 16.1, վարչական և սպասարկող անձնակազմի թվաքանակը 13, վարչական և սպասարկող անձնակազմի դրույքների թիվը 14:

Ընդամենը դրույքների թիվը 30.1:

ՈՒսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը՝ 12.2 ժամ կամ 0.55 դրույք:

2. Ֆինանսատնտեսական բնույթի տեղեկատվություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում

2015թ.

հազ.դրամ

Ցուցանիշներ	Տարրական դպրոց			Միջին դպրոց			Ավագ դպրոց			Ընդամենը
	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	
1.Աշակերտների թիվը ըստ կոմպլեկտավորման	77	76	X	71	78	X	53	43	X	
2.Աշակերտների թիվը ըստ տարիֆիկացիայի	77	76	X	71	78	X	53	43	X	
3.Աշակերտների թիվը ըստ մատյանների	77	76	X	71	78	X	53	43	X	
4. Մեկ աշակերտի թվով ֆինանսավորման չափը/դրամ/	124000	124000		124000	124000		124000	124000		
5.Ֆինանսավորում փաստացի 1*4/հազ.դրամ/	5119.0	2559.5	7678.5	6746.2	3373.1	10119.2	4786.8	2393.4	7180.2	24978.0
6.Պահպանման ծախսեր/հազ.դրամ/	X	X		X	X		X	X		17301.6
7.Այլ լրացուցիչ ֆինանսավորում	X	X		X	X		X	X		4953.7
8.Այլ լրացուցիչ պակասեցում	X	X		X	X		X	X		
9.Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		47233.3
Ըստ աուդիտի 3*4	5119.0	2559.5	7678.5	6746.2	3373.1	10119.2	4786.8	2393.4	7180.2	24978.0
6.Պահպանման ծախսեր	X	X		X	X		X	X		17301.6
Այլ լրացուցիչ ավելացում	X	X		X	X		X	X		4953.7
8.Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		47233.3
Շեղում/ավելի ֆինանս.+,պակաս ֆինանս -/	X	X		X	X		X	X		0.0

Ըստ կոմպլեկտավորման և ըստ աուդիտի տարրական, միջին և ավագ դպրոցների աշակերտների միջին թիվը կազմել է համապատասխանաբար՝ 77, 73 և 50 աշակերտ:

2016թ.

հազ.դրամ

Ցուցանիշներ	Տարրական դպրոց			Միջին դպրոց			Ավագ դպրոց			Ընդամենը
	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	
1.Աշակերտների թիվը ըստ կոմպլեկտավորման	76	75	X	77	84	X	41	41	X	
2.Աշակերտների թիվը ըստ տարիֆիկացիայի	76	75	X	77	84	X	41	41	X	
3.Աշակերտների թիվը ըստ մատյանների	76	75	X	77	84	X	41	41	X	
4. Մեկ աշակերտի թվով ֆինանսավորման չափը/դրամ/	124000	124000		124000	124000		124000	124000		
5.Ֆինանսավորում փաստացի 1*4/հազ.դրամ/	5073.3	2536.6	7609.9	7330.0	3665.0	10995.0	3941.1	1970.6	5911.7	24516.6
6.Պահպանման ծախսեր/հազ.դրամ/	X	X		X	X		X	X		17726.2
7.Այլ լրացուցիչ ֆինանսավորում	X	X		X	X		X	X		6768.3
8.Այլ լրացուցիչ պակասեցում	X	X		X	X		X	X		
9.Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		49011.1
Ըստ աուդիտի 3*4	5073.3	2536.6	7609.9	7330.0	3665.0	10995.0	3941.1	1970.6	5911.7	24516.6
6.Պահպանման ծախսեր	X	X		X	X		X	X		17726.2
Այլ լրացուցիչ ավելացում	X	X		X	X		X	X		6768.3
8.Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		49011.1
Շեղում/ավելի ֆինանս.+,պակաս ֆինանս -/	X	X		X	X		X	X		24516.6

Ըստ կոմպլեկտավորման և ըստ աուդիտի տարրական, միջին և ավագ դպրոցների աշակերտների միջին թիվը կազմել է համապատասխանաբար՝ 76, 79 և 41 աշակերտ:

Կազմակերպությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել ◻ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ◻ ստանդարտը: Հաշիվների մնացորդների և գործառնությունների դասերի կտրվածքով ապրանքա-նյութական արժեքների հնարավոր կորստի ու յուրացման վրա: Ներքին վերահսկողությանը բնորոշ սահմանափակումների կտրվածքով՝ ներքին վերահսկողության համակարգում խաբեության առկայության հնարավորությունը կազմակերպության ղեկավարության անդամների կամ աշխատողների կազմակերպության ներսում կամ այլ կողմերի միջև գաղտնի համաձայնության գալու հնարավոր լինելու վրա:

Հաշվապահական հաշվառման համակարգի վերաբերյալ բավարար պատկերացում կազմելու, ճանաչելու համար ուշադրություն է դարձվել հաշվապահական հաշվառման գրանցումների, ֆինանսական հաշվետվությունների, հաշիվների և օժանդակող փաստաթղթերի արժանահավատությանը: Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ կազմակերպության հաշվապահական հաշվառումը բավարար է գործել, ներքին վերահսկողության համակարգը՝ նույնպես բավարար:

ՀՀ պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2015թ.

հազ.դրամ

Անվանումը	Նախատես-ված	Ֆինանս.	Դրամարկ. ծախս ըստ հաշվետ.	Դրամարկ. ծախս ըստ աուդիտի	Փաստ. ծախս ըստ հաշվետվ.	Փաստ. ծախս ըստ աուդիտի	Շեղում
Ընդամենը ֆինանսավորում	49549.7	49558.8	48885.5	48885.5	48746	48735.8	-813.9
Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված	49549.7	47233.3	48885.5	48885.5	48746	48735.8	-813.9
Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ	43325.2		43227.7	43227.8	43266.7	43256.3	-68.9
Անապ.երեխա. գրքեր	69.8		69.8	69.8	69.8	69.8	0
Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից	6154.7		5588	5587.9	5409.5	5409.7	-745
Գրասենյակային նյութեր և հագուստ	173.3		173.3	173.7	173.3	173.7	0.4
Կենցաղ և հանրային սննդի նյութեր	1819.9		1655	1724	1655	1724	-95.9
Ներքին գործուղումներ	50		30.5	30.5	30.5	30.5	-19.5
Այլ ծախսեր							0
Վարչական սարքավորումներ	150		120	120	120	120	-30
գործ. և բանկային ծառ. ծախսեր							0
Կապի ծառայության վճարներ	100		70	70	72.2	71.5	-28.5
Կոմունալ ծառայությունների վճար	3611.5		3351.7	3282.8	3171	3103.1	-508.4
էլ. էներգիայի ծախսեր	625.9		481.7	481.6	457.5	457.4	-168.5
Վառելիքի և ջեռուցում ծախսեր	2749		2693.2	2624.4	2534.1	2467	-282
Ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար.	180		176.8	176.8	179.4	178.7	-1.3
Տրանսպորտ	56.6						-56.6
Ընդհանուր բնույթի այլ ծառայ.	250		187.5	186.9	187.5	186.9	-63.1
Բանկի տոկոս		0.1					0
Տարեսկզբի դրամ. միջ. ազատ մնաց.		242.3					0
Այլ ծրագրեր*		1803.1					0
Այլ ծրագրեր**		169.4					
Այլ ծրագրեր***		31.8					
Այլ ծրագրեր****		69.8					
Այլ ծրագրեր*****		9					

* ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 692-Ն որոշմամբ դպրոցական սննդի կազմակերպման և ապահովման նպատակով հատկացված գումար: Նախատեսվել է 1803.1 հազ.դրամ /77 աշակերտ/, ֆինանսավորվել է 1803.1 հազ.դրամ: Փաստացի ծախսը կազմել է 1632.3 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 1632.3 հազ.դրամ, մնացորդը՝ 170.8 հազ.դրամ:

** ՀՀ կառավարության 10.11.2011թ.-ի թիվ 1745-Ն որոշմամբ ատեստավորման միջոցով որակավորում ստացած պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչներին հավելավճար տալու նպատակով հատկացված գումար:

*** Կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում <<Կուտակային կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքով սահմանված կանոնների համաձայն վճարված և հետ վերադարձված գումար:

**** Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում ծրագրով ֆինանսավորում:

***** <<ԱՅԲ>> հիմնադրամի կողմից <<Կենգուրու>> մրցույթ անցկացնելու համար հատկացված գումար:

<< պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2016թ.

հազ.դրամ

Անվանումը	Նախատես-ված	Ֆինանս.	Դրամարկ. ծախս ըստ հաշվետ.	Դրամարկ. ծախս ըստ աուդիտի	Փաստ. ծախս ըստ հաշվետվ.	Փաստ. ծախս ըստ աուդիտի	Շեղում
Ընդամենը ֆինանսավորում	49923.6	49926.6	49229.3	49229.3	49523.3	49507.8	-415.8
Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված	49923.6	49011.1	49229.3	49229.3	49523.3	49507.8	-415.8
Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ	43489.2		43213.6	43213.6	43213.6	43199.9	-289.3
Սոց. անապահով երեխա. դասագրքեր	71.5		67.2	67.2	67.2	67.2	-4.3
Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից	6362.9		5948.5	5948.5	6242.5	6240.7	-122.2
Գրասենյակային նյութեր և հագուստ	150		150	154	150	154	4
Կենցաղ և հանրային սննդի նյութեր	1800		1475.1	1748.6	1475.1	1748.6	-51.4
Հատուկ նպատ.նյութեր	100		100	102.2	100	102.2	2.2
Այլ ծախսեր	218.1		199.8	27.7	199.8	27.7	-190.4
Ներքին գործուղումներ	75		72.6	72.6	72.6	72.6	-2.4
Վարչական սարքավորումներ							0
Կապի ծառայության վճարներ	100		97.3	97.3	92	92	-8
Կոմունալ ծառայությունների վճար	3669.8		3606.9	3506.2	3906.2	3803.7	133.9
էլ. էներգիայի ծախսեր	550		498.8	498.8	509.3	509.2	-40.8
Վառելիքի և ջեռուցում ծախսեր	2939.8		2965.3	2864.6	3235	3132.6	192.8
Ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար.	180		142.8	142.8	161.9	161.9	-18.1
Տրանսպորտ							0
Ընդհանուր բնույթի այլ ծառայ.	250		246.8	239.9	246.8	239.9	-10.1
Բանկի տոկոս							0
Տարեսկ.դրամ.միջոց. ազատ մնաց.		673.3					0
Այլ ծրագրեր*		239.2					0
Այլ ծրագրեր**		3					

* << կառավարության 10.11.2011թ.-ի թիվ 1745-Ն որոշմամբ ատեստավորման միջոցով որակավորում ստացած պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչներին հավելավճար տալու նպատակով հատկացված գումար:

** <<ԱՅԲ>> հիմնադրամի կողմից հատկացված գումար:

Դեբիտորների և Կրեդիտորների հաշվառման աղյուսակ

	Աշխատավարձ և դրան հավ. այլ վճար.		Կոմունալ ծառայութ.		Կապի ծառայութ.		էլ էներգ. ծախսեր.		Գազ		Այլ Դեբիտ. և կրեդիտ. պարտքեր		Ընդամենը	
	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K
Մն.01.01.15թ.	28.5			0.7	0.5			14.1		272.5	0.0	0.0	29.0	287.3
Շրջանառություն 2015թ.	43227.8	43256.3	176.8	178.7	70.0	71.5	481.6	457.4	2624.4	2467.0	2304.9	2304.9	48885.5	48735.8
Մն.01.01.16թ.	0.0	0.0		2.6		1.0	10.1			115.1	0.0	0.0	10.1	118.7
Շրջանառություն 2016թ.	43213.6	43199.9	142.8	161.9	97.3	92.0	498.8	509.2	2864.6	3132.6	2412.2	2412.2	49229.3	49507.8
Մն.01.01.17թ.	13.7			21.7	4.3			0.3		383.1	0.0	0.0	18.0	405.1

Հաշվապահական հաշվեկշիռ
Առ 01.01.2015թ. - առ 01.01.2016թ.

Ձև N 1

հազ.դրամ

Ակտիվ	Տարեվերջի դրությամբ ըստ հաշվետվության	Տարեվերջի դրությամբ ըստ աուդիտի	Շեղում
Ոչ ընթացիկ ակտիվներ որից	38805.4	38805.4	0
հիմնական միջոցներ			0
մն.արժ.	38805.4	38805.4	0
արժեքը			0
մաշվածություն			0
Ընթացիկ ակտիվներ որից	3515.8	3515.7	-0.1
Նյութեր	2814.2	2800.4	-13.8
փոքրարժեք և արագամաշ առարկաներ			0
մն.արժ.			0
արժեքը			0
մաշվածություն			0
կարճաժամ. դեբիտ.պարտքեր	4.3	18	13.7
որից հաշ. տրված կանխ.վճ.գծ.			0
հաշվ. գնորդ. և պատ. հետ			0
Հաշվ.սոց.ապահ. և ապահովության գծով			0
Հաշվարկներ անձնակազմի հետ			0
Հաշվարկներ անձնակազմի հետ նյութական վնասի հատուցման գծով			0
հաշվարկներ բյուջեի հետ		13.7	13.7
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
հաշվ տարբ. դեբիտ. հետ	4.3	4.3	0
դրամական միջոցներ, որից	697.3	697.3	0
դրամարկղ			0
հաշվարկային հաշիվ	697.3	697.3	0
Հաշվեկշիռ	42321.2	42321.1	-0.1
Պասիվ			0
Սեփական կապիտալ որից՝	41916	41916	0
Լրացուցիչ կապիտալ	41916	41916	0
Հաշվետու տար.չօգ. զուտ շահ.			0
Նախ. կար. չօգ. զուտ շահ.			0
Եկամ. վերաբ. շնորհ.			0
Կարճ. ժամկ. կրեդ. պարտքեր	405.2	405.1	-0.1
այդ թվում			0
հաշվարկ. մատակ.և կապալ. հետ	405.2	405.1	-0.1
հաշվարկներ բյուջեի հետ			0
Հաշվ. սոց ապահ. և ապահով. գծ.			0
այդ թվում տույժեր և տուգանքներ			0
Հաշվարկներ անձնակազմի հետ եկամուտների վճարման գծով			0
հաշվարկներ տարբ. կրեդիտորների հետ			0
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
Կարճ. ժամկ. այլ պասիվներ որից			0
գալիք ժաման. եկամուտներ			0
Հաշվեկշիռ	42321.2	42321.1	-0.1

Մեր կողմից աուդիտի արդյունքներով կազմվել է հաշվեկշիռ, որը հիմք է տալիս եզրակացնելու՝ հաշվեկշիռը տալիս է կազմակերպության հաշվեկշռի ճշմարիտ և իրական պատկերը:

Դրամական միջոցների հոսքերի մասին
հաշվետվություն
առ 01.01.2015թ. - առ 01.01.2016թ.

Ձև N 4

հազ.դրամ

Ցուցանիշների անվանումը	Տող	Գումարն ըստ հաշ.	Գումարն ըստ աուդիտի տվյալների	Շեղում
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	010	673.3	673.3	0.0
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր				
Արտադրանքի աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	49011.1	49011.1	0.0
Ապրանքների իրացումից	030			0.0
Ընթացիկ այլ ակտիվների իրացումից	040			0.0
Ստացված կանխավճարներից	050			0.0
Կարճաժամկետ ֆինանսական ներդրումների դիմաց հաշվարկված եկամուտներից	060			0.0
Գործառնական այլ գործունեությունից	070	242.2	242.2	0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	080	49253.3	49253.3	0.0
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր				
Չեռք բերված արտադրական պաշարների դիմաց	090			0.0
Ապրանքների ձեռք բերման դիմաց	100	1924.9	2032.5	107.6
Կատարված աշխատանքների մատուցված ծառայությունների դիմաց	110	4090.8	3983.2	-107.6
Տրված կանխավճարներ	120			0.0
Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դիմաց	130	43213.6	43213.6	0.0
Սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով	140			0.0
Առհաշիվ տրված գումարներ	150			0.0
Վճարումներ բյուջե	160			0.0
Գործառնական այլ գործունեության նպատակով	170			0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	180	49229.3	49229.3	0.0
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	190	24.0	24.0	0.0
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ		697.3	697.3	0.0

Մեր կողմից դրամական հոսքերի աուդիտ է իրականացվել, որը հիմք է հանդիսանում կազմակերպության կողմից ստացված եկամուտների և կատարված դրամական ծախսերի վերաբերյալ ճշմարիտ կարծիք կազմելու համար:

Վայոց Ձորի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանս, գլխավոր մասնագետներ՝ Ն.Կարապետյանս, Հ.Ավետիսյանս և Խ.Խաչատրյանս իրականացրեցինք <<Գետափի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում 2015-2016 թթ.-ի բյուջետային տարվա ֆինանսական աուդիտ առ 01.01.2017թ. դրությամբ: Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվություն է կրում կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Աուդիտն իրականացվել է ներքին աուդիտի ստանդարտներին և գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ աուդիտը պլանավորենք և իրականացնենք ֆինանսական հաշվետվությունները և հաշվապահական հաշվառման փաստաթղթավորումը և ձևակերպումները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքները:

Մեր կողմից կատարվել է կազմակերպության հաշվապահական հաշվառման ուսումնասիրություն, ֆինանսական և գործառական տեղեկատվության ստուգում, տնտեսական գործունեության նվազագույն ծախսերով իրականացման ուսումնասիրություն, ինչպես նաև օրենքների այլ իրավական ակտերի, կազմակերպության ղեկավարության քաղաքականության, հրահանգների և ներքին այլ պահանջման ուսումնասիրություն: Իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կողմից կազմակերպության հաշվապահական հաշվառման գործունեությունը գնահատվել է վերապահումներով բավարար: Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը գնահատվել է աուդիտի արդյունքներով, որը արտահայտվել է աուդիտի հաշվետվության մեջ:

Ընտրանքային կարգով համադրեցինք գույքացուցակներով արտացոլված և առկա գույքը: Անհամապատասխանություններ չհայտնաբերեցինք:

Առ 01.01.2017 թ.-ի դրությամբ կազմակերպության դրամական մնացորդը կազմել է 697.3 հազ. դրամ, դեբիտորական պարտքը՝ 18.0 հազ. դրամ /13.7 հազ.դրամ՝ եկամտային հարկի գծով, 4.3 հազ.դրամ՝ կապի ծառայություն/, կրեդիտորական պարտքը՝ 405.1 հազ.դրամ /0.3 հազ.դրամ՝ էներգետիկ ծառայություններ, 383.1 հազ. դրամ՝ գազի բաշխման ծառայություններ, 21.7 հազ.դրամ՝ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ/: 405.1 հազ.դրամի կրեդիտորական պարտքը դրամական մնացորդով ամբողջությամբ ապահովված է:

Առ 01.01.2016թ.-ի դրությամբ դրամական միջոցների ազատ մնացորդը կազմում է 310.2 հազ.դրամ:

Արձանագրված թերություններ և խախտումներ:

ՈՒսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 2015-2016թ.թ.-ին՝ 12.6 ժամ կամ 0.57 դրույք, 2016-2017թ.թ.-ին՝ 12.2 ժամ կամ 0.55 դրույք: Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը 2016-2017թթ.-ին 2015-2016թթ.-ի նկատմամբ նվազման տենդենց է կրում:

Կազմակերպությունում մաթեմատիկա առարկան դասավանդում են թվով 4 ուսուցիչ. մեկ ուսուցչի հաշվով միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 11.2 ժամ, կենսաբանություն առարկան դասավանդում են 3 ուսուցիչ. մեկ ուսուցչի հաշվով միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 8.1 ժամ:

Գազի բաշխման ծառայություններ հոդվածով նախահաշվային գումարից ավել է ծախսվել 192.8 հազ.դրամ:

Հաստատված նախահաշվով նախատեսված գումարները ամբողջ ծավալով չեն օգտագործվել: Արդյունքում կուտակվել է 310.2 հազ.դրամի դրամական ազատ մնացորդ:

Կազմակերպությունը չունի որակավորված գնումների համակարգող, որի արդյունքում 2016 թ.-ին կայուն դպրոցական սնունդ ծրագրով նախատեսված ապրանքների գնում կատարելու ընթացակարգը չի համապատասխանում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջներին:

Ներքին հսկողության համակարգը վերապահումով գործել է անբավարար, որի արդյունքում 2015թ.-ի հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է համապատասխանաբար 535.6 կվտ.ժ, 488.5 կվտ.ժ և 488.5 կվտ.ժ: 2016թ.-ի նույն ամիսներին ծախսը կազմել է 716 կվտ.ժ, 579 կվտ.ժ և 639 կվտ.ժ, որը մեր կողմից չի կարող իրատեսական դիտվել :

Բացակայում է սննդի պահեստային հաշվառման մատյանը: Սննդի հաշվառում չի իրականացվել: Համաձայն <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի նշված թերությունները վերացնելու համար տրվեց համապատասխան խորհրդատվություն:

Առաջարկվեց դպրոցի տնօրենին՝

ա/ Թույլ չտալ ուսուցիչների ծանրաբեռնվածության նվազում: Ուսուցիչների ծանրաբեռնվածությունը բարձրացնելու նպատակով առաջարկում ենք վերանայել հաստիքացուցակը և կատարել հաստիքային միավորների հնարավոր կրճատումներ:(Առաջարկությունների դասակարգման միջին չափանիշ):

բ/ Թույլ չտալ նախահաշվով նախատեսված գումարներից ավել ծախսումներ:(Առաջարկությունների դասակարգման միջին չափանիշ):

գ/ Հաստատված նախահաշվով նախատեսված գումարները օգտագործել ամբողջ ծավալով, թույլ չտալ դրամական ազատ միջոցների տարեվերջյան կուտակում: (Առաջարկությունների դասակարգման փոքր չափանիշ):

դ/ Գնման գործընթացը <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իրականացնելու համար ապահովել գնումների համակարգողի առկայություն: (Առաջարկությունների դասակարգման միջին չափանիշ):

ե/ Ապահովել ծախսերի նկատմամբ ներքին հսկողության գործառույթ: (Առաջարկությունների դասա

կարգման միջին չափանիշ):

զ/ Ապահովել սննդի պահեստային հաշվառման մատյանի առկայությունը: (Առաջարկությունների դասակարգման միջին չափանիշ):

Առաջարկությունների կատարման վերաբերյալ մեկամսյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝	Վ. Կարապետյան
Ներքին աուդիտորներ՝	Ն. Կարապետյան
	Հ. Ավետիսյան
	Խ. Խաչատրյան
Դպրոցի տնօրենի ժ/պ՝	Հակոբյան
Հաշվապահ՝	Վարդանյան